ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-25/14**

ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Զովունի բնակավայրում ֆուտբոլի մարզադաշտի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված **«ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-25/14»** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ **08.09.2025թ.** ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ **10.09.2025թ.** տրամադրված պարզաբանումը՝

Հարցում 1

Հարգելի գործընկեր

Ծավալաթերթ նախահաշվի 7-րդ տողում նշված է դրենաժային մոդուլ 250մմ, խնդրում ենք տրամադրել տեխնիկական բնութագիր նշված ապրանքատեսակի վերաբերյալ, քանզի նախագծում նույնպես բացակայում է դրա վերաբերյալ որևէ ինֆորմացիա:

Պատասխան 1

Հարգելի գործընկեր

Տեղեկացնում ենք, որ տեխնիկական վրիպակի պատճառով ծավալաթերթ նախահաշվի 7-րդ տողում նշված է դրենաժային մոդուլ 250մմ, ուստի խնդրում ենք ՝ 250 մմ կարդալ **25 մմ:**

Հարցում 2

Ծավալաթերթ նախահաշվի 11-րդ տողում նշված է աղացած ռետին 30մմ, որի համար չափման միավոր է ֆիքսված՝ ԿԳ: Խնդրում ենք դիտարկել նշված քանակը քանզի կարծում ենք, որ չափման միավորը պիտի փոփոխվի տոննայի, ըստ այդմ կարծում ենք նաև անհրաժեշտ կլինի փոխոխել միավորի արժեքները:

Պատասխան 2

Խնդրում ենք աշխատանքը կատարելիս հիմք ընդունել ծավալաթերթ նախահաշվում արտացոլված հաշվարկները:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել **«ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-25/14»** ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Մ .Պապյանին:**

Հեռախոս՝ **098 11 88 00**:

Էլեկտրանային փոստ՝ **mher-papyan@mail.ru**

«ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-25/14» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով